# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<27>> հունվարի 2016 թվականի N 3 ք.Գյումրի

## ԿԱՌԼԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգի» 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի 2016 թվականի հունվարի 26-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Կառլեն Աբրահամյանին գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի համայնքների միությունում կայանալիք <<Լավագույն համայնք>> ամենամյա մրցանակաբաշխության կանոնակարգի ու ընթացակարգի կատարելագործման նպատակով ձևավորվող աշխատանքային խմբի աշխատանքներին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը 1 օր՝ 2016 թվականի հունվարի 29-ին:

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է